

ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

1979 թ. հուլիսի 11-ից 14-ը ԱՄՆ-ում, Պենսիլվանիայի համալսարանում (Ֆիլադելֆիա) կայացավ հայերենագիտական I միջազգային գիտաժողովը, որը մեծ իրադարձություն էր հայ լեզվաբանության պատմության մեջ: Այն կազմակերպվել էր Միջազգային ուսումնասիրությունների և փոխանակությունների խորհրդի (JREX), Պենսիլվանիայի համալսարանի (պրոֆեսոր Վ. Գրիգորյան) և Օհայո նահանգի Կլիվլենդի համալսարանի (պրոֆ. Ջ. Գրեյֆին) համատեղ ջանքերով՝ Ալեքս Մանուկյանի մշակութային ֆոնդի անմիջական աջակցությամբ:

Գիտաժողովը խիստ ներկայացուցչական էր: Նրա աշխատանքներին մասնակցում էին 12 երկրներից (ՍՍՀՄ-ից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Բուլղարիայից, Լեհաստանից, Հունգարիայից, Հունդիայից, Նորվեգիայից, ԳՖՀ-ից, Շվեյցարիայից, Կանադայից, Անգլիայից) ժամանած լեզվաբանները: Կարգացվեցին 25 զեկուցումներ՝ նվիրված հայերենագիտության առավել կարևոր հարցերին՝ հին, միջին և ժամանակակից հայերենի երկու տարբերակների, ինչպես նաև բարբարոսների ընձեռած տվյալների հիման վրա առաջ քաշված ընդհանուր-տեսական հարցադրումներով: Սովետական պատվիրակությունը բաղկացած էր 4 հոգուց (ՀՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Գ. Ջաճուկյանը, ՀՍՀՄ ԳԱ թղթակից անդամ է. Աղայանը, բանասիրական գիտությունների դոկտոր Ն. Պառնասյանը՝ ՀՍՀՄ ԳԱ լեզվի ինստիտուտից և բանասիրական գիտությունների դոկտոր է. Թումանյանը՝ Մոսկվայի լեզվաբանության ինստիտուտից), որոնք բոլորն էլ կոնֆերանսում հանդես եկան զեկուցումներով: ԱՄՆ-ի Պենսիլվանիայի, Կալիֆոռնիայի, Տեխասի, Օհայոյի, Միչիգանի նահանգների համալսարաններից և լեզվաբանական կենտրոններից զեկուցումներով հանդես եկան 11 հոգի, երկուական զեկուցում ներկայացրին ԳՖՀ-ն և Հոլանդիան, իսկ մնացած երկրներից կարգացվեցին մեկական զեկուցում: Բացի անմիջական զեկուցողներից, գիտաժողովի աշխատանքներին, որպես ունկնդիրներ, մասնակցում

էին ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ այլ երկրների գիտական, հասարակական և պաշտոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ըստ իրենց բովանդակության զեկուցումները խմբավորվում էին հետևյալ գիտական ուղղությունների շուրջը՝ համեմատական և պատմական լեզվաբանություն, լեզվի տարբեր մակարդակների համակարգային ուսումնասիրություն, հանրալեզվաբանություն՝ կապված փոքր լեզուների խմբերի լեզվի պրոբլեմի հետ (սփյուռքահայ գաղութների ընձեռած նյութի հիման վրա), կիրառական լեզվաբանություն (էՄՄ-ի կիրառությունը լեզուներ, մասնավորապես հայերեն սովորեցնելու համար), տեքստաբանության ու լեզվական տիպաբանության հարցեր: Կոնֆերանսում քննարկված հարցերը իրենց ընդգրկման լայնությամբ ու բազմակողմանիությամբ դուրս էին գալիս հայ լեզվաբանության շրջանակներից և ունեին կարևոր նշանակություն նաև ընդհանուր լեզվաբանության, մասնավորապես համեմատական լեզվաբանության համար:

Զեկուցումների ճշշող մեծամասնությունը (մոտավորապես կեսը) նվիրված էր համեմատական լեզվաբանության խնդիրներին: Քննարկման ղրվեցին համեմատական քերականության համար մեծ կարևորություն ներկայացնող այնպիսի հարցեր, ինչպիսիք են հայերենի տարածքային բնութագրությունը և նրա տեղը շեղվորոպական լեզվաբանությունում, լեզվի հնչյունային և հնչյութային համակարգերի զարգացման հարցերը՝ կապված հիմնականում հայերենի բաղաձայնների պրոբլեմի հետ, հնչյունափոխությունների համեմատական ժամանակագրության հարցերը, հայոց լեզվի տվյալների նշանակության հարցը կոկորդային հնչյունների տեսության մեկնության համար և այլն:

Հնդեվրոպական լեզուների ազգակցական կապերի և դրանց մերձավորության աստիճանի հարցի հետ էլ անմիջականորեն կապված հայերենի տարածքային բնութագրման պրոբլեմը, որին նվիրված էր երկու զեկուցում՝ ՀՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ջաճուկյանին (ՍՍՀՄ)

և պրոֆ. Կ. Խ. Շմիդտինը (ԳՖՀ)։ Այս հարցի լուծմանը հեղինակները մոտեցան տարբեր դիրքերից։ Գ. Ջահուկյանը այդ պրոբլեմի լուծման համար կիրառել էր վիճակագրական մեթոդը, որը նոր մոտեցում է և կարևոր ներդրում նշված պրոբլեմի ուսումնասիրության բնագավառում։ Առանձնացնելով հայերենը հնդեվրոպական մյուս լեզուներին կապող առավել էական հնչյունային, բառական ու քերականական իզոգլոսները և վերլուծելով ստացված տվյալները՝ Գ. Ջահուկյանը եկավ այն եզրակացության, որ կենդանի հնդեվրոպական լեզուներից հայերենին ամենամոտն է հունարենը, ամենահեռուն՝ ալբաներենը, միաժամանակ ցույց տվեց, որ արևմտյան խմբի լեզուները (գերմանական և իտալյան) թեև իրենց կառուցվածքային հատկանիշներով ավելի հեռու են հայերենից, բայց բառական հատկանիշներով ավելի մոտ են, իսկ հնդեվրոպական մեծած լեզուներից հայերենին ամենամոտն են իսթա-լովական ու թոխարական լեզուները, որոնք, սակայն, իրենց հնչյունական առանձնահատկություններով գնում են թրակերենից և փոյուգերենից հետո։

Գ. Խ. Շմիդտը նույն խնդիրը քննել էր այլ տեսանկյունով։ Հիմնվելով հարաբերական ժամանակագրության տվյալների վրա՝ նա ձգտում էր ցույց տալ հայերենի մերձավոր կապերը հունարենի, փոյուգերենի և հնդիրանական լեզուների հետ։ Շմիդտը գտնում էր, որ այդ լեզուների միջև եղած կապերը շատ ավելի լայն էին նախապատմական շրջանում և մթազնվել են հետագա պատմական զարգացման ընթացքում՝ նորագոյացությունների հետևանքով։ Որպես ապացույց իր այդ տեսակետի, նա ներկայացրեց և վերլուծեց երեք ձևաբանական երևույթ՝ նախահայկական միջին-կրավորականը ներկա ժամանակի համակարգում, անցյալ կատարյալն ու անկատարը և, վերջապես, եզակի գործիական հոլովի -*bñi-ով ձևերը։ Ինքնատիպ էր հեղինակի այն միտքը, որ հունարենում, հնդիրանական լեզուներում և հայերենում գոյություն ունեցող կրավորական կառուցվածքի տիպերը արտացոլում են հնդեվրոպական նախալեզվի փոխակերպության երեք տարբեր՝ ժամանակագրությամբ հաջորդական աստիճաններ։

Ջեկուցումների մեջ զգալի տեղ էին գրավում հնդեվրոպական նախալեզվի հնչյունական համակարգի հետագա զարգացման հարցերը, հայերենի հնչյունափոխական պրոցեսների հարաբերական ժամանակագրությունը, կոկորդային հնչյունների տեսության հարցերը և այլն։ Այսպես՝ Ջ. Գրեպինի (ԱՄՆ) ղեկուցումը նվիրված էր հայերենի զ (շ) հնչյլթի հնդեվրոպական նախաձևերի հարցին։ Նոր մեկնաբանություն

տալով այդ հարցին՝ հեղինակը ենթադրում է, որ հայերենի բառասկզբի զ-ն ծագում է հնդեվր. *gʷh-ից։ Որոշակի բառացանկի վերլուծության հիման վրա հեղինակը ցույց տվեց, որ այդ հնչյունը կարող է համապատասխանել նաև հնդեվրոպական *ǵh-ին։

Կորտլանդի (Հոլանդիա) ղեկուցման մեջ քննված էր հնչյունափոխությունների հարաբերական ժամանակագրության պրոբլեմը։ Առանձնացնելով հնչյունափոխությունները հաջորդականության կարգով արտացոլող 22 օրինակափոխություններ՝ նա փորձեց տալ նախահայկական հնչույթային համակարգի հիմնական զարգացման ժամանակագրական հաջորդականությունը։

Լամբերտերին (Փարիզ) ղեկուցեց հնդեվրոպական կոկորդային հնչյունների հերթագայության մասին, մի երևույթ, որ սատեմ լեզուներում հիմնվում է *kʷ/k, *gʷ/g, gʷh/gh հարաբերակցության վրա։ Հայերենում այդ երևույթի դրսևորումները վերլուծելու համար հեղինակը բերեց այնպիսի դուզեր, ինչպիսիք են darj-/durgn, barj-/burgn, որոնք ծագում են dhergʷh-/dhergh-, *bhergʷh-/bhergh-**ձևերից** և այլն։

Լինդեմանի (Նորվեգիա) ղեկուցման մեջ քննության էր առնված առաջին հայացքից բավականին մասնավոր թվացող հարց. նա տվեց ակաճ բառի հնչույթաբանորեն ոչ պարզ հոգնակի ձևի (ակաճf) նոր մեկնաբանություն, որ անմիջականորեն կապված է գրաբարում շնչեղ ձայնեղների առկայության վարկածի հետ։ Վերջինս բանավիճային հարց է և լայնորեն քննարկվել է 1959—1962 թթ. «Вопросы ЯЗЫКОЗНАНИЯ» ամսագրի էջերում ծավալված հայերենի բաղաձայնական համակարգին նվիրված բանավեճում։ Վերոհիշյալ վարկածը բանավեճի ժամանակ հատկապես հետևողականորեն պաշտպանեց Հանս Ֆոգտը։ Հիմնվելով այդ վարկածի վրա՝ Լինդեմանը տվեց ակաճ բառի զարգացման պատկերը հետևյալ ձևով՝ հնդ. *awsnā>հայ. *aganj, որը հնչյունաբանորեն մեկնաբանվում է որպես *aghanjhi։ Եթե Ֆոգտի և ուրիշների վարկածը գրաբարում ձայնեղ շնչեղների առկայության մասին ճիշտ է, ուրեմն Լինդեմանը հավանաբար գտել է այդ բառի հնչյունային ճիշտ մեկնաբանությունը։

Ժամանակակից համեմատաբանության պրոբլեմների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում կոկորդայինների վարկածը։ Եվ բնական է, որ այդ հարցը ևս գիտաժողովում քննության նյութ դարձավ, հատկապես Լթե նկատի առնենք, որ հայերենի ընձեռած փաստերը ընկած են այդ տեսության կողմնակիցների, առանձնապես ամերիկյան դպրոցի ներկայացուցիչների, փաս-

տարիների հիմքում է. Պոլոմեն (ԱՄՆ) հանգամանորեն վերլուծելով կոկորդալիների տեսության վերաբերյալ եղած վարկածներն ու տեսակետները՝ լուսարանեց համեմատարանության այդ կարևոր պրոբլեմի ներկա վիճակը: Այնուհետև, զնահատելով հայերենի տվյալները, նա հանգեց այն եզրակացությանը, որ ներկայումս միակ տարածքը, որտեղ հաստատապես կարելի է պահանջված գտնել կոկորդալիների արտացոլումները, հայկական պրոտեղան է և բառակերպ՝ ձայնավորից առաջ եղած Ռ-ն, որը համապատասխանում է խեթերենի Ռ-ին և մնացած բոլոր հնդեվրոպական լեզուների **Թ-ին**:

ՀԱՍՀ ԳԱ թղթակից անդամ է. Բ. Աղայանի զեկուցումը նվիրված էր հայերենի ձևարանական համակարգում հնդեվրոպական ձայնավորների հերթագայության արտացոլման պրոբլեմներին: Վերլուծելով ԽՈՒ (սեռ. հ. ևաճ) ածանցով վերջացող գոյականների հոլովման ձևավորման պատմական պրոցեսը՝ հեղինակը ցույց տվեց, որ այդ գոյականների հարացույցում դիտվում է ձայնավորների օրինաչափ հերթագայություն հենց ածանցի ներսում՝ ձայնղարձի աստիճանների օգնությամբ. ածանցը ծագում է հնդեվրոպական **-ven/ʷn/ʷn-*ից, իսկ սեռական հոլովի *-ean* ձևը՝ հերթագայության թույլ աստիճանից, այսինքն՝ **-ʷ > հայ. an*:

Տ. Թումաջյանը (ԱՄՆ) համառոտակի ներկայացնելով բացառականի վիճակը ազգակից հնդեվրոպական լեզուներում՝ պատմահամեմատական տեսանկյունով ներկայացրեց նրա աստիճանական զարգացումը հայերենում (հայերենի զարգացման բոլոր փուլերում): Վայտեներգը (Հոյանդիա) կոռուստ տիպի բառերի քննության հիման վրա զեկուցեց հայերենի բայանունների ուստ (*ust*) ածանցի ծագման մասին, որի նախատիպը ևնթաղրվում է հնդեվրոպական **ʷ* լի ածանցը: Մի մասնավոր հարցի՝ լյառդ բառի յուրօրինակ մեկնարանությանն էր նվիրված Արրայտմանի (ԱՄՆ) զեկուցումը՝ հիմնված հին մեկնարանությունների և նոր տվյալների վրա:

Տիպարանական իմաստարանության պրոբլեմին էր նվիրված Ծորի (ԳՖՀ) զեկուցումը: Ուսումնասիրելով հայերենի և այլ ազգակից ու ոչ ազգակից լեզուների համապատասխան բառական միավորների իմաստային անհամապատասխանությունները՝ հեղինակը լուծում է այդ հարցը՝ հիմք բնդունելով, մի կողմից, ներքին ձևի և լեզվարանական հարաբերականության վերաբերյալ Հումբոլտի և Սեպիր-Ուորֆի վարկածը, մյուս կողմից՝ իմաստարանական երեվոյթներին համաժամանակյա մոտեցման պահանջը: Քննության առնվեց ներքին ձևի և լեզ-

վական հարաբերականության դերը լեզու-լտալոնի կառուցման մեջ, որը (այդ լեզու-լտալոնը, կարող է ծառայել որպես իմաստային միավորների նկարագրության կաղապար: Վերլուծման համար հայերենի բառային միավորները համեմատվեցին վրացերեն, ռուսերեն և գերմաներեն համարժեքների հետ:

Գիտաժողովում ներկայացված զեկուցումներից հինգը նվիրված էին հայերենի զարգացման տարրեր շրջանների քերականական կառուցվածքների տարրեր մակարդակների համակարգային ուսումնասիրության հարցերին:

Դրանցից երեքը վերաբերում էին հին հայերենին՝ զբաբարին:

Լ. Զեքիյանի (Իտալիա) զեկուցումը զբաբարի անունների հոլովման հարացույցի նկարագրության նոր մոտեցման փորձ էր: Այդ հարցին նվիրված նախորդ ուսումնասիրությունների մեջ (բացառությամբ Գ. Զահուկյանի աշխատանքի) զբաբարի հոլովական համակարգը լուսարանվում է հիմնականում հոլովական վերջավորությունների վերլուծական նկարագրության միջոցով: Զեքիյանը փորձեց տալ հոլովական ձևերի վերլուծությունը համադրության սկզբունքով՝ երևան հանելով այն օրինաչափությունները, որոնք հատուկ են դասական հայերենի ամբողջ համակարգին: Նա ներկայացրեց աղյուսակ, որով սեղմ և համակարգված տրված էին զբաբարի հոլովման բոլոր տիպերը: Միևնայանի (Շվեյցարիա) զեկուցման մեջ բնկված էին զբաբարի հարցական նախադասությունները: Զեկուցողը ներկայացրեց զբաբարի հարցական նախադասությունների հատկանիշները՝ զբանք բաժանելով երկու խմբի՝ արտաքին (հարցական բառերի, մասնիկների, զերանոնների և այլնի առկայությունը) և ներքին (տեքստի տրամաբանական ընկալումը): Մարտիրոսյանը (ԱՄՆ) դասական հայերենի նյութի հիման վրա քննեց բայածանցների շարահյուսական դերը:

Ժամանակակից հայերենին էին նվիրված երկու զեկուցում՝ Ն. Պառնասյանինը (ՍՍՀՄ) և Էլեն Հայկինը (ԱՄՆ):

Ն. Պառնասյանի զեկուցման մեջ համակարգային վերլուծության հիման վրա լուսարանվեց հոմանիշության և համանունության պրոբլեմ ժամանակակից արևելահայերենի քերականական կառուցվածքում: Քերականական վերջավորությունների համակարգը ներկայացվեց իրենց հոմանիշական և համանունական կապերի մեջ: Նշելով երկու հոմանիշական հարաբերությունների առկայությունը՝ հեղինակը բնդգծեց, որ հոլովման և խոնարհման համակարգերում գերիշխում է նույնանիշությունը: Առանհանցանությունը համանուն և ԱԼոյիների խմբերը՝ հեղինակը

Համանունությունը խստորեն տարբերակեց այն քաղմիմաստությունից, երբ վերջավորությունը, հանդես գալով հարացույցի նույն տեղում, արտահայտում է մի քանի քերականական իմաստներ։ Էլեն Հայկը արևմտահայերենի նյութի հիման վրա ներկայացրեց մակրայական ժամանակային նախադասությունների համակարգի մի քանի կերպային առանձնահատկությունները։

Կոնֆերանսում առաջին անգամ բարձրացվեց հանրալեզվարանական տեսանկյունով սփյուռքահայ զաղութներում հայերենի ուսումնասիրության անհրաժեշտության հարցը։ Այդ հարցը տարրեր տեսանկյուններով լուսարանվեց երկու զեկուցումների մեջ՝ Է. Ծ. Թումանյանի (ՍՍՀՄ) և Լ. Մաթոսյանի (ԱՄՆ)։ Ե. Թումանյանը իր զեկուցման մեջ այն կապեց փոքր ազգային խմբերի լեզուների պոետիզմների հետ։ Տեսական հիմնավորմամբ տրվեցին այն գործոնները, որոնք օժանդակում են փոքր ազգային խմբերի լեզուների պահպանմանը օտարլեզվյա միջավայրում։ Էստ հեղինակի այդպիսի գործոններ են, ամենից առաջ, հոգևոր մշակույթի քարձր մակարդակը, մայր հայրենիքի հետ ունեցած ավանդական կապի սերտությունը, գաղութի (համայնքի) ներսում միասնության ձգտումը։ Նշվեց նաև զպրոցի, պարբերական մամուլի և եկեղեցու դերը այդ գործում։

Լ. Մաթոսյանը իր կողմից կազմած հարցաքանի տվյալների հիման վրա (հարցարանը լրացվել էր Վաշինգտոնի և Նյու Ջերսիի հայերի կողմից) ներկայացրեց վիճակագրական տվյալներ և գնահատելով նահանգների հայկական բնակչության տարրեր սոցիալական շերտերի լեզվական վիճակը՝ փորձեց տալ ԱՄՆ-ում հայերենի զարգացման հեռանկարները։

Զգալի հետաքրքրություն առաջացրեց ԱՄՆ-ի Ստենֆորդի համալսարանից Հ. Սերոբյանի և Լ. Մարկոսյանի զեկուցումը ԷՀՄ-ի օգնությունը օտար լեզու՝ մասնավորապես հայերեն սովորեցնելու վերաբերյալ։ Լեզու սովորեցնող կոմպյուտերի ցուցադրումով, որը գործում էր Ֆիլադելֆիա—Ստենֆորդ անմիջական հեռախոսային կապի օգնությամբ, նրանք ներկայացրին մեթոդներ տրվող հայկական լեզվարանական ծրագիրը։ Կոմպյուտերով ուսուցումը նախկինում իրականացվել է միայն իսպաներենի, ֆրանսերենի, գերմաներենի և իտալերենի համար։ Հայերենի համար պատրաստվածը նոր՝ նախորդներից տարրեր և նրանց համեմատությամբ կատարվող գործված տարբերակ է։ Ուսանողը կոմպյուտերի հետ կարող է աշխատել ուղած կետում և մենակ, քանի որ այն կառավարվում է միասնական կենտրոնից։ Նա լսում է առաջադրանքն ու իրեն և քանի որ չկա մամանակային սահմանափակություն,

կարող է արագացնել կամ դանդաղեցնել ուսուցման րնթացքը, անհատականացնել ուսուցման կուրսը իր ունակություններին համապատասխան։

Մի քանի զեկուցումներ ունեին տեքստադանական ուսումնասիրությունների բնույթ՝ մասնավոր և րնդհանուր նշանակության հետաքրքիր արդյունքներով։ Այսպես, Է. Շյուտցը (Հունգարիա) ներկայացրեց միջին հայերենի հնչյունական առանձնահատկությունների վերաբերյալ նոր տվյալներ՝ հիմնված XIV դարի բազմալեզվյան բառարանի ուսումնասիրման վրա, բառարան, որն ունի 700 հայերեն բառ և նախատեսված է եղել առևտրականների ու գործարար մարդկանց կարիքները բավարարելու համար։ Կոկսի (Կանադա) և Ա. Տերյանի (ԱՄՆ) զեկուցումները նվիրված էին հունարենից հայերեն հին թարգմանությունների լեզվական առանձնահատկությունների լուսարանմանը։ Կոկսը «Երկրորդումն օրինաց»-ի հայկական տարբերակը համեմատելով հունական բնագրի հետ՝ ի հայտ բերեց լեզվական շեղումները և տվեց վերջիններիս լեզվարանական վերլուծությունը՝ դրանց առկայությունը կապելով նաև մասամբ թարգմանիչների՝ բնագիրը ըմբռնելու և մեկնարանելու հետ։ Ա. Տերյանի տեքստարանական վերլուծությունների համար նյութ էին ծառայել հին հունական փիլիսոփաներ Պլատոնի և Արիստոտելի աշխատությունների հայերեն թարգմանությունները V դարում։ Զեկուցումը արժեքավոր էր մասնավորապես հունարան հայերենի շարահյուսական առանձնահատկությունները վեր հանելու տեսակետից։ Հեղինակը միաժամանակ ներկայացրեց թարգմանությունների մեջ եղած անճշտությունները՝ բացահայտելով դրանց բնույթը։ Այսպիսի հետազոտությունները արժեքավոր են նաև նրանով, որ բանալի են տալիս հասկանալու հին հունական հեղինակների ստեղծագործությունները, հատկապես այնպիսիները, որոնք պահպանվել են միայն հայերեն։

Ջ. Թասկը (Անգլիա) իր զեկուցման մեջ ներկայացրեց պահյալերեն K'US'IK բառի հայերենի մեջ ներթափանցելու պատմությունը և նրա օգտագործման տարբերակները։

Ուշադրության արժանի էր նաև Ա. Պիսովի (Լեհաստան) զեկուցումը, որը ներկայացրեց հետաքրքիր տվյալներ Լեհաստանում հայտնաբերված հայ բարրաոնների IV՝ կիլիկյան խմբին պատկանող մի մեոնող բարբառի մասին։

Որպես եզրակացություն պետք է նշել, որ գիտաժողովը անցավ կազմակերպված և գիտական բարձր մակարդակով՝ գործնական միևնույնությամբ, փոխըմբռնման պայմաններում և ե-

դավ բավականին արդյունավետ։ Նրա համար բնորոշ էր այն, որ բոլոր զեկուցումները լսվեցին մեծ հետաքրքրությամբ, և բոլորի շուրջը, առանց բացառության, ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որը հաճախ շարունակվում էր նաև ընդմիջումների ժամանակ։ Գիտաժողովը կարևոր էր առանձնապես երկու առումով. նախ՝ այն ներդրում էր ոչ միայն հայերենագիտության և պատմահամեմատական լեզվաբանության, այլ նաև լեզվի ընդհանուր տեսության բնագավառում։ Երկրորդ՝ այն հնարավորություն ընձեռեց հաստատելու նոր կայեր, ճշգրտելու այն պրոբլեմատիկան, որի վրա աշխատում են սովետական և արտասահմանյան հայագետները, ավելի հանգամանորեն ծանոթանալու հայերենի ուսումնասիրության տարբեր բնագավառներում Հայաստանից դուրս, առանձնապես ԱՄՆ-ի տարբեր համալսարաններում տարվող աշխատանքներին և ընդհանուր գծով տալու հետագա աշխատանքի հեռանկարները։ Այն անպայմանորեն խթան կհանդիսանա հայերենագիտական աշխատանքների հետագա ծավալմանը, առանձնապես արտասահմանում։

Գիտաժողովի արդյունքները ունեն նաև գործնական նշանակություն։ Այս առումով պետք է ընդգծել առանձնապես էՀՄ-ի օգնությամբ լեզու ուսումնասիրելու փորձը։ Այդպիսի փորձի կիրառումը մեզանում կարող է սթանդակել ուսաց և օտար լեզուների ուսուցման բարելավմանը։

Հայերենագիտական միջազգային գիտաժողովը վկայում է նաև այն աճող հետաքրքրության մասին, որ կա արտասահմանում դեպի հայերենը։ Ըստ «Armenian Reporter» (2. 8. 1979 թ.) թերթի՝ ներկայումս հայերեն ուսումնասիրում են շատ ավելի երկրներում, քան երբեք նախկինում։

Գիտաժողովի աշխատանքները դրականորեն լուսարանվեցին արտասահմանյան համապատասխան պարբերական մամուլում (ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա և այլն)։ Ցանկություն հայտնվեց միջազգային հայերենագիտական 2-րդ գիտաժողովն անցկացնել Երևանում։

Բանասիր. գիտ. դոկտոր

Է. Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆ (Մոսկվա)

Բանասիր. գիտ. դոկտոր Ն. Ա. ՊԱՌՆԱՍՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐԸ

Մեր երկրում արխիվային գործի իսկական ծավալումն ու զարգացումը տեղի ունեցավ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո։ 1918 թ. հունիսի 1-ին Ժողովրդական կոմիսարների խորհուրդը Վ. Ի. Լենինի ստորագրությամբ ղեկընտ հրապարակեց արխիվային գործի վերակառուցման ու կենտրոնացման մասին։

Դեկրետով ցարական ու ժամանակավոր կառավարությունների կենտրոնական հիմնարկների և գերատեսչությունների արխիվներն անցնում էին պետությանը, իսկ նրանցում պահվող փաստաթղթային նյութերը հայտարարվում պետական միասնական արխիվային ֆոնդ։

Հետագայում, Լենինի ստորագրությամբ լույս են տեսնում նաև մի քանի այլ ղեկընտնելի արխիվների մասին, որոնցում ավելի հանգամանորեն նշվում են երկրում արխիվային գործի կազմակերպման տարբեր բնագավառներում ձեռնարկվող միջոցառումները, հատկապես հեղափոխական շարժումների պատմության վերաբերյալ փաստաթղթերի կենտրոնացման անհրաժեշտությունը։ Ա. Լենինաշարսկին, Սովետական Միության ականավոր պատմաբաններ Գրեկովը, Պոկրովսկին, Ադորատսկին, Յարոսլավսկին, Խվոստովը, Ադամովը և ուրիշներ մեծ ծառա-

յություններ ունեն արխիվային գործի կազմակերպման, «Կրասնի արխիվ» ժուռնալի ստեղծման, առաջին վավերագրական ժողովածուների և ցարական կառավարության գաղտնի պայմանագրերի, դիվանագիտական գրազրույթությունների հրապարակման գործում։

1938—1962 թթ. երկրի պետական արխիվները գտնվում էին ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի (այսպես մինչև 1946 թ.) տնօրինության տակ, հանգամանք, որ չէր նպաստում արխիվային փաստաթղթերի լայն մասշտաբով օգտագործմանը՝ ի շահ գիտության զարգացման։

Հետագայում մի շարք վերակառուցումներից ու կազմակերպչական փոփոխություններից հետո ՍՍՀՄ մասշտաբով արխիվային գործի անմիջական ղեկավարությունն անցնում է Միևիստրների խորհրդին ինչպես կենտրոնում, այնպես էլ ազգային հանրապետություններում։

ՍՍՀՄ Միևիստրների խորհրդին առընթեր գործում է Գլխավոր արխիվային վարչությունը՝ պետական կոմիտեի իրավունքներով։ Այդ գլխավոր վարչությունն ունի կոլեգիա, գիտական խորհուրդ, գիտահետազոտական ինստիտուտ և մտտ երկու տասնյակ բաժիններ։